քիչ անգամ հարկաւոր եղած չափովը կը գանուի, և միշտ անպատճառական կ'ըլլայ՝ առանց արտաքոյ կարգի ի ստուծոյ ընդհատը։ Ի յսկիսի նորոգութեան հրաշքը ամենազօրմ՝ ու ամենակարող գերբնական ազդեցութիւն մը միայն կրնայ կատարել։

Իւանդոտ տղայոց վրայ ցուցրցած չափէ դուրս ու աւելորդ հոգն ու խնամքը երբեմն զտղաքը ոդորմելի կերպով մը կ'աւրեն։ Ակայ բան մը որ այնչափ վնասակար ըլլայ տղու մը՝ ինչպէս երկար ատեն հիւանդութեան մը պատճառաւ՝ հօր մը, մօր մը ու տանը բոլոր ծառայիցը սիրոյն ու ամէն տեսակ հոգերուն խնամքներուն ու զգուշութիւններուն մէկ հատիկ նպատակն ըլլալը։

Բան մը իրեն չէ ջուսուիր, ամենուն միտքը ու ամենուն աչքը միշտ իրեն վրայ են. ինքը ամենուն սրտին անհանգստութեանը ու գործովղն նպատակն է։

Դարձեալ կ'ըսեմ. քան զատ աւելի կարեկցելու բան չկայ. վնան զի գրեթէ անխորշելի վնաս մըն է, բայց սակայն մեծ վնաս ու շտկելու համար երկարատև առողջութեան մը ու զօրաւոր դաստիարակութեան մը կը կարօտի։

Պէտք է գոնէ վտանգը ձանչնալ, ու ծրչափ որ կարելի է նէ զգուշանալ։ Պ անալու է որ այն սիրուն հիւանդին աւելորդ ծառայութիւնները ջլլան, ու միայն այն ատեն իրեն ուզածը կատարել՝ երբոր իրապէսնէ հարկաւորութիւն կայ, և կամ երբոր խոհեմ սէրը ու արդարացի խնամքը զնոյնը պահանջեն։ Այս ամենևին չեմ տարակուսիր ըսելու՝ որ ատ աշխարհիս վրայ չկայ դաստիարակութիւն մը՝ որ հօրմէ մը, մօրմէ մը այնչափ խոհեմութիւն այնչափ նախատեսութիւն այնչափ ձնարտարութիւն ու այնչափ աչալրջութիւն պահանջէ՝ ինչպէս այսպիսի խեղճ տղոց դաստիարակութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ [1]

Յորձափ տեսեն սրբազան այն իրաւունք հարց և իշխանութիւն՝ի վերայ սերնդոց, ոչ դադարեսցեն՝ի նոցանէ և որդւոյ իրաւացի պահանջք խնամարկութեան և հոգոյ, խրատուք զգուշութեան և խորհրդովք։ Օ՛ի եթէ և՝ի դաստիարակութենն յանձնելոյ՝ի ձեռս օտարաց, նոյն պարտիք կան մնան՝ի վերայ ծնողաց, զի աւանդ են նոքա ուշոյ մտադրութեան նոցա հաւատացեալք, քանիօն ապա՝ի կրկին գարձ նոցա՝ի գիրկս ծնողականս։ Այս զի ըստ հասակին զարգանալոյ և ըստ մտացն խզելոյ կապանաց՝ յաձախեսցին կուտեսցին հոգք, եթէ զդաստիարակութեան որ զարգասիս հարիւրապատիկս ցանկանայցէ քաղել՝ի նոցանէ։

Ի անգի ընդ ամն բազմավաստակ դաստիարակութեան՝ վարժչայն և վարժելոյն քրտնաթոր աշխատութիւն՝ ակօսաբեկ կակղեալ հարթեն զհողակոշտս անդաստանի մտաց մանկութեան, յորս վարդապետութիւնք և խրատք՝ի վերայ եկեալ՝ սերմունք են ծածկեալ խնամով, և երկարատև համբերութիւն երկուստեք՝ ուռոգմունք շահաւէտք, որով փթթեալ և ընձիւղեալ սերմանցն բարձրանան՝ի գիտութենց և պատշաճիւ բոյոս, և սերձապլուխ հասկօք առաքինութենան զարդարին ոձք։ Դեղեցիկ տեսիլ, վաստակոյ ձգանց բիւրաբեղուն արգասիք։ Այլ սակայն հնձողաց պէտք են յօգտիւ շահիցն բերեալք՝ քաղել զպտուղս և շտեմարանել՝ի համբարս մարդկութեան և հայրենեաց։ Այս զայս ահա ծնողաց մանկտւոյն համարիմ և ժողովրդեան ազգին գործ։ Այս եղիւկ. զի եթէ անխոնջ մշակացն բազուկք և երկիրն ինքնին ոչ պակասեալ՝ի բազմաբեր արդեանցն, անփութութիւն միայն

[1] Տես երես 327։

հնձողաց՝ Թուղնոց արասցէ զայն կերր, ՚ի դատարկութեան ցնդեալ զմանկտոյն հանձար, կամարհամարհանօք Թողեալ լքեալ ապականել առաքինութիւն։ Ոչ պարտ ապա, չէ արժան չափով ամաց սահմանել զժամանակ դաստիարակութեան, իբր եթէ ՚ի պայմանեալ աւուրս ձգանց վարդապետացն և աշակերտելոց յայլաղեալ ՚ի գլուխ ելցէ ամենայն՝ չմնալով այլ ինչ ըղձալեաց։ Այր մանաւանդ ըստ իս սկիզբն է մեծահոգ խնամոց. զի քան զամենայն հասակ զգուշութեան պետս ունի եռանդնոտ պատանեկութիւն, որ ոչ ինչ վայրապար ՚ի ձի խստերախս կերպարանեցաւ, որ որչափ և ազնուական և վսեմ բնութեան վիճակեալ, այնչափ դիւրագրգիռ և դիւրամոլար, և իմաստուն ձեռին կարօտ՝ ՚ի վարել զանձն մըտաց նորա և սրտի, անսալ ուղիղ խորհրդոյ և գնալ ընդ ճշմարտութեան արքունի պողոտայ։ Այլ սակայն ըստ յանձնապաստան աշխուժին հնար գոյի նա, եթէ ողջքով ոք գիտասցէ վարել. եթէ ոչ ձգնեսցի ոք ընկճել զնոսա կանն նորա միտ՝ յոր պանծայ նա ընդ աստուածապարգև չնորհն. եթէ փոխանակ ծնողաց, վարդապետաց և հայրապետի խրատչաց, բարերար և սիրելի անուանց, զպարսաւանդիտաց ոք և ըզխիստ դատաւորաց զանուանս ոչ հնչեցուսցէ յունկն նորա։

Վանզի որչափ և բարեպարիշտք եղեն մանկտին ՚ի վարժոցս, որչափ և կիրթք ՚ի գիտութիւն և ՚ի մարդկութիւն, և գեր ՚ի վերոյ քան զբազումս ՚ի հասակակցաց և ՚ի հասարակ մարդկանէ, այլ ոչ անձամբ անձանց բաւականանալ ՚ի յորձանուտս աշխարհի, որ զնզօրագոյնս անպատ գիտէ նաւակոծել. և զօրհանապատ փորձք աղետալիք հատուածք են ճշմարտութեանս։ Որոյ վասն և բազում զգուշութեամբ, սիրա՛ի դողդոջ և միտք յերկիւղի՝ իւրեան վարժապետք նոցա դաւձուցանել անարատ ՚ի բազմահոգ խնամն ծնողաց զանուղութեան նոցա զաւանդ, զգործունեայ և զաշխոյժ հասակ, և ազգին զիւր ակընկալութիւն՝ երջանկագոյն աւուրց հանդերձելոց։ Որոյ թէպէտ երաչխաւորութեան լուծանին յայնժամ պայմանքն, այլ ոչ և սիրալիր հոգոց ՚ի հեռաստ՝ լուծցին երբեք կապանք։

Այնպէս և առաջնական նոցա զգօն ձեռամբ՝ և իմաստնագոյնք յորդւոցն նորա, լինդագին բարձեալ աննախանձ զգեղեցիկ զեղեցիկ աւարս հանձարոյ ՚ի թիկունս որդւոց արևելից, ուղղոյ աունեն զնոսա՝ դարձ ՚ի մայրն իւրեանց առնել Ասիա, զուարթութեամբ և՝ զի փոխանակ ընկալելոյն ՚ի նմանէ երբեմն պարզևաց իմաստից՝ անժլատաբար փոխարինեն ՚ի ժանկունս նորա։

Սակ բարեսէր և առաքինական աշակերտելոցն մնեալք օրինակօք անկեղծութեան, և վարժեալք ոգւով անարատ սուրբ և անչահախնդիր աղգասիրութեն՝ նոյն կարծեն գտանել զամենայն մարդիկ, բարեաց ժողովրդեան իւրեանց և մարդկութեան նախանձաւորս, և սատարս մարդասիրական փութոյ և ջանից։ Այլ զինչ իբրև տեսանիցեն զՀայրենիս և զփոքր ածու ժողովրդեան իւրեանց յատակարկեալս կառույ դժնդակագունի քան զամենայն զառանին խաչեալ. ուր մնիսանք, ստութիւն և հակառակութիւն ընդ դիմակօք բարեպաշտութեն մոլեգնեալ, և ոգի ատելութեան ամբարձեալ ՚ի միջի ՚ի շունչ և ՚ի կենդանութիւն ձիւաղացն, և սինքզոյն տգիտութիւն զՀետ հրեշեայն գրոհ տալով։

Ո՛ տեսիլ ահաւոր։ Այս զինչ անփորձ և անմեղ պատանիքն ՚ի տոսա. ուր և ծընողք նոցին բարեսէրք և համայն բարեմիտն մարդիկ վշտագնեալ տագնապեցին։ Ի սկզբան վշտագնին առաքինասէրքն և ահաբեկին՝ տեսեալ առաջի տգիտութեան՝ կորագլուխ ամաչել առաքինութեան, և ապա զնոցա անմտութիւն անպատնեն և զանխմաստ գնացս։ Այս ո՛ր զարմանք, զի որ զհոհականագոյնս ՚ի մարդկանէ ՚ի զայրոյթ ածէ և ՚ի սրտմտութիւն, և եռանդնոտ մտացն Թէ զնոյն ազգեսցէ։ Այս ո՛ արդեօք պահանջել կարիցէ ՚ի սոցանէ զերկայնամիտ իմաստասիրութիւն վարդապետացն կիրթ եղելոց ՚ի հալածանս զրպարտու-

թեանց՝ քարեխոտհ միշտ գտեալ և քա-
րեգործ ընդդէմ ատելեաց ։

Ա՛յլք ևս ազգա մարդիկ են, ե երբեք
զի՛ւ գառնագոյն հեծումիւնս անդ
և՛ի հառաչանս սրտից՛ի վերայ հակա-
ռակութեան մարդկան և աղետից որդ-
ւոց ժողովրդեան իւրեանց, յոտաբեկ
իմն և յոտահարս՝ ըղձակեալ լինին
տարապէմ վտարանդի երթալ և յաշ-
խարհ, ՚ի լերինս մենայեալս և՛ի քար-
անձաւս անմարդիս ամիսս ամիսս զգանձս
իմաստութեան և հաւատոյ, ուր հա-
կառակութեան և ատելութեան ձայն
իսկոյն ոչ ժամանեսցէ. ուր և մար-
գարիտն սրբութեան ապրել մարթաս-
ցի յերգիծեցուցչացն իւրոց ։ Ա՛յլ ան-
մահն այն ոգի Հիմնարայ կրճիին
ընդ մէջ անկեալ, և տուրքն հայրենա-
սիրութեան թևածեալ վնոքօք, կա-
պեալ ունի վնոստս կաշկանդեալ՛ի զոհ
՚ի վերայ սեղանոյ հայրենեաց և օգտիչ
ժողովրդեան ազգի իւրեանց ։

Ա՛յս բազդ մարդկայնոց սահմանե-
ցաւ իրաց, զի մեծամեծքն յարարոյ,
մեծապանիչն ևս խոչընդոտն խափա-
նարարաց գտցին՛ի նեղքոյ ։ Այս չէն
ինչ զարմանք զի լերինք բարձրաբերձք
կածեսցին՛ի հողմոյ, և ծով խորան-
դունդ ծփեսցի յալեաց. և առաքինու-
թիւն և ճշմարտութիւն նպատակ կաց-
ցին նետից տգիտութե՛ն և ատութեան.
և վերածնութիւն ազգի՛ւ ի մեռելու-
թենէ գիտութեան և պատշաճից՛ի ծը-
նունդ գեղեցիկ կենդանութեան՝ հա-
կառակութիւն կրեսցէ ։ Այս այս է ահա
զոր տեսանելիք յաստարեղ գժտութեան
և կռուոյ. տգիտութիւն ընդ գիտու-
թեան մրցել, կանխակալ սովորութիւն
ընդ վայելուչ կարգաց և պատշաճից,
ինքնուրոյն ոմանց շահ օգտի՛ ընդ հաս-
րակաց մարդկութեան շահուն, միտք
ընդ մտայ և կարծիք ընդ կարծեաց բա-
խեալ, և ամենայն ինչ իսուն՛ի խուն՝
ճշմարտութիւն ընդ ստութեան, խա-
ւար ընդ լուսոյ ։

Օ՛նոյն կրեսցէ և ամենայն ժողո-
վուրդ որ յերկունս քաղաքականութեան
իցէ. ՚ի նոյն տեսանելիք՛ի մեծոյ և զինչ
խոչն արեւելից զ( )ամանեանն յաղթ
պետութի՛ւ, զարթուցեալ յամայ հետէ
՚ի նորս յայս և յանծանօթն՛ի նախնեաց
իւրոց և հաւուց յղձալիսն քաղաքակա-
նութիւն ։ Այս Ա՛ստուած ինքն ծուխ
իմն սատար նմին և օգնական, զի որոյ
՚ի ձեռս են սիրտք թագաւորաց՝ յանկնին
տեսչութեանն ուղղէ զվէհագնն և զվե-
ծախառոյց սիրտ հզօր Հնդկականին՝ յայս
գործ անմահական, զգերութեան զա-
մօթալին անուն մերժեալ՛ի քրիստո-
սական ազգաց, իբրև որդւոց զնա-
մոյն իւրոց ածէ զվերարկու զնոքօք, և
սիրէ զմարդասէրն զիւր գութ զամենե-
քումբք՝ որ ընդ շքոյն աստուածայնով
կեցցեն ։ Թագաւոր որ զիտաս իւր յեր-
ջանկութիւն ժողովրդոց իւրոց եգեալ,
և՛ի գրուել զսիրտս նոցա զյաղթու-
թեանց իւրոց զաշխարհակալութիւնս ։
Յաղթանակ շքեղ և անկողոպտելի ։

Ա՛յսպիսի աք Ասիան իւրոյին մեծա-
խորհուրդ տեսութեամբ խելամուտ՝ զի
՚ի մեծատարած տերութեան կրօնիւք և
օրինօք զանազանելոց ազգաց՝ չէ գործ
դիւրին վարժոյս, կրթարանս և ձեռն-
բանս բաւեցուցանել՛ի գիտութիւն և
յարուեստ և յուղղութիւն մարդկու-
թեան, քարձրաքարող խրախուսեք՛ի
ձեռն արժանաւոր պաշտօնէից իւրոց. ո-
րոց քաղմաց ականատես գտեալ աստ
մերոց ջանիցս և գովեք, ձգնել վաս-
տակել իւրաքանչիւր ժողովրդոց՛ի զար-
գացումն և՛ի պայծառութիւն իւրոյ մա-
սին, յաձախել զչանձարեղ հպատա-
կըս՝ որոց պետս ունիցի նա միշտ, ոչինչ
ապախտ արարեալ և զարժանաւոր վար-
ձուքն ։ Այս ո ապա այնպես անապրոյն,
ու ժպրհեալ հակառակեցի կամաց Ա՛ս-
տուծոյ և թագաւորին, և հակառա-
կամարտ մարդկութեան դասի ։

Վատնեալ և ոգին այն վնհամնեալ
որ ընդ հաւատարմութե՛ն առ Ա՛ստուած
իւր՝ անսխեղծ և անարատ հաչակեցոյց
զնոյն և առ թագաւոր իւր պատուհա-
սող երբեմն և վարձատիչ, քաջ խելա-
մուտ կամաց տեառն իւրոյ, և անձամբ
ականատես և՛ի մեծոյ հետախոյզ մե-
ծոց գաստիարակութեան կարգաց, և

խոլամուխ նոցին քաղմապէմ շահուց ՚ի նպաստ կրօնից և արժանաւոր մարդկութեան, և ընդ այլ մեծաշուք և չքնաղ առաքինութիւնս իւր առաւելեալ և ՚ի մարդասէրն հայրենասէր գութ առ որդիս ժողովրդեան իւրոյ՝ հաստատութեամբ խորհեցաւ, խորհուրդ գեղեցիկ, զՅերին մերոց արդեանց իւրովին բարձր ձեռնտու ստատուածութեամբ ընդ՝ արդիւնաբեր ևս գործեալ զայնս. ՚ի նոյն և վմանկանց տեարս և զազգն զարթուցանելով։

Եւ անշուշտ ոչ յորմէնս վարժարանաց միայն փայլէին յայնժամ հանձարք մանկտուցս, և մտաց նոցա և ձեռաց ճարտարութիւնք, ոչ զեբրտպականս միայն զարմացուցեալ, ՚ի ստգտանս անձանաչ մարդկան՝ ՚ի հայրենիս ընկղմեալ անհետանային։ Տեսանէր Հայաստան, Թէ գեղարուեստից ոգի, ոչ չքնաղին և մեսայաշուքն Յտալիոյ միայն իսկ պարգեւ, այլ և որդւոց իւրոց բնիկ աչխոյժ մաքառի փոխառնուլ ՚ի նմանէ, կամ լաւ եւս զնուն զՅագուցեալն և զՀնչեալ՝ զարթուցեալ վերբերել։ Ցարձեալ և մի մի բարեմասնութիւնք իմաստնոց աստի ազանց արագ արագ փոխանցէին որդեաք յանշքայեալ ՚ի մեր ժողովուրդս։ Եւ աւազ մարդկայնոց դիւրափոխիկ իրաց. կենաց և քաղդին արագաշարժ անիւք ամիոփեցին զբազմարդիւն և զգեղեցիկ աւուրս Յեհազնին յաչաց մերոց՝ և ընդ նմին փոխան բարեացն անցելոց, առաջիկայից և ակընկալելեաց՝ յաջորդեցին չարիքն զմեօք։ Եւ բարեսիրաց ՚ի ժողովրդենէ և լաւ որերոց դեռ ևս ոչ ցամաքեցան յաչաց արտասուք, որչափ ժխորք խռովութեանն ոչ պարզեսցին, և զօրացուսցէ Եստուած զնմանիս նորա զնչխանս՝ ՚ի բարգաւաճանս ժողովրդեան իւրոյ։

Եւ այս ամենայն բանիս դիտաւորութիւն, զի սակաւ յոյժ օգնեն բարեպաշտ մարդկան առանձինն ոգի դաստիարակութեան և փոյթ ՚ի զարգացումն մարդկութեան, եթէ և ձեռնտու ոչ գտցին նոցա ժողովրդեան իղձք՝ կանոնեալ օրինօք և կարգօք իշխանութեան։ Օ՛ի ոչ արդարև դեպք էին անկարծելիք և բնութեան իսաղ, առ Էմեսեան և ուղղափառեան դարուք մեծամեծ և զեղեցիկ հանճարից փայլել յաստարէզս գիտութեանց իբրև ջահավառ մխեռըայս, կամ աստեղս փնայուն լուսահետս ՚ի պըուածս հրաշազանս. ոչք զԵրոպ ձնհասցուցեալ՝ զանուանս համբաւոյ անմահս թողին յետնոց։ Եյլ քանզի հաստատ է առաքինութիւն, և երկչոտ հանձար, խրախոյս իւր իմնդրէ և քաջալերս, ապ՛եթէ ոչ՝ թագուցեալ ծածկին գանձք նորա ընդ չեղեալն համարեալ։ Վանի ՀԻրպիւք, քանի Գիցիանոսք և Վանուվայք անյուշ, անանուն ընկղմին ՚ի ծով յաւիտենից, զի չեն ՀԵկենաւք, չեն ()գոստոսք և իշխանք ժամանակայն։ ՀՈւր արդեօք անհետանայր և Եյվազովսքին այն երիտասարդ մեծահանձար, որ զՀրաշալիս մատանին սիրէ ՚ի մեռեալ կտաւ, և զբնութիւնն յափշտակեալ ամիսիւ ՚ի փոքրիկ սահման՝ յապշութիւն իմաստնոց Եվրոպայ և ողջոյն մարդկութեան, եթէ մեծագոր իշխանին սատարութիւն և ժպիտն կայսերական խրախուսիչ՝ ոչ յարուցանէր զնա ՚ի փառս հիւսիսական ազգին, և ՚ի պարծանս հայ հանձարոյ։ Եւ կցեսցի լեզու իմ ՚ի քիմն իմ եթէ մոռացայց երբէք զձեզ վեհազունք իմ հայրենեաց լուսածնունդ զաւակք արեգակունք ՚ի կամարս երկնից գիտութեան Հայաստան աշխարհի շողափայլեալք, ՀԱհակ և ՀԵսրովպ, և դու իշխանդ քրիստոսասէր և իմաստասէր ՀՂամշապուհ։ Եյթէ դուք չէիք, ՚ուր մեզ հանճաւատեղիչ և ըղձալի անուանք հրաշակերտից այնոցիկ արանց, զորս աւանք և գիւղք ընծայեցին իմաստութեան և աշխարհին ՚ի պարծանս։ Եյլ զի զձկնչ խօսել մեծաշնորհ երկնից պարգեւաց են տուրք, և տուաւ ումմ տուաւն, ինձ ապա խոնարհեալ և զլռութիւն համբուրեալ՝ զՀետ բանիս արժան է ընթանալ։ Հանձարոյ աստեմբողք ընդ անշուք երկրաւ յաշխոյ գանձին. և հզօր ձեռին պետք են զչքաւորութեան սեաւ վարագոյր ՚ի բաց առ-

նուլ, և զփայլ նորա գիտուն աչաց յայտ առնել։ Եւ մի ապա վեր ի վայր յեղյեղել՝ թէ զինչ պէտք գաստիարակութեան աղքատաց և գիտութեան. որպէս եթէ չլիցեն ինքք բաժանակից մարդկութեան պարգեւաց. որպէս եթէ չլինչ յաշխարհութեան և ոչ լիմաստութեան իսկ մարդոյս առաւելութիւն։ Վասդաբեաց ի սպառ և այն անարգ առածն անմտաց՝ Անմտութեամբ և կրթութեամբ հայիկն ոչ շահեցաւ. ոլով կեցին հարքն մեր կեցցուք և մեք նմաւա։ Եւ յայնժամ արդարև սկիզբն լիցի սրել մտաց և հանձարոյ և յազգիս, և մի՝ անշուք անտեսութեամբ խորասոյզ ընկղմեսցի։

Վասկայն հակառակորդք, և չգիտեմ ոյց, մեր եթէ լռամանդակ մարդկութիճ, ծափահար խնդութեամբ հուչակեն թէ ընդ վայր է ձիկն ձեր ի խրախուսել զոգիս ի գիտութիւն և ի մարդկութիւն, զի չերևեսցին քնաւ ի վարժարանաց ձերոց և ոչ հետք անգամ հանձարոյ ինկարս պատկերաց, ի ձարտարապետութեան և յարուեստս, այլ լռիքն հանդերձ։ — Ճատ էր մեզ եթէ ի վարժոցայ նոցա գնեցա ելանէին հանձարքն և զարգանայր ազգս, և նախանձընդդէմք մեր սուլին գեղեցիկ նախանձու և ստոյգ առաքինութիճ՝ ձրգնէին անցանել զմեզ, և մերս անուն յանյուշն մնասցաւթեան խորասուզեր, և ոչ նախատալիս հեգնութիճ զատութեան ձանալ ածել զգիտութեամբ և զառաքինութեամբ։

Այլ ոչ առեալ տարաւ զիս քանն, մինչ ընդ բարեաեր մարդկան զօգտիս մանկութեան խօսել Թուէի. զիարդ ի ցասումն արդար ըմբռնին միտք և առանց իսկ յօժարելոյ։ Ելութեան ապա արտուղութեան և ես դարձայց ի քանս։

Եւ ո այնպէս անպէտ գոյն, ասեմ, մարդկայնոց մտաց, որ զամենայն մանկտի ընդ սեաման գպրոցաց կոխեալ և ի մաստաեբս և մատենագիրս մեծանունս յարդարել, և արձանագործ և պատկերահանս երևելիս յաշխարհի զնոսա աւանդել խորհրդի։ Ձեմարանն իմաստութեան Աթոռ՝ որ ի գարուս հետէ համալսարանաւքն, վարժոցովք և գըպրոցօք ձխխացեալ, և տեսս ի բազմաթիւ և ի բազմախուռն ոդիս նորա քանիք համբաւոյ արժանաւոր մարդիկ՝ որ մատնանիշ ցուցանիցին։ Վ արժոյք ի գիտութիւն են մարդկութեան և կրօնից. և քաղաքականութիւն և իմաստուն աշխարհշահատակելնաւագել յիւրմէ զանմիտ և զանբան մարդիկ՝ որ քան զնախատինս ոչ ինչ յաւելուցուն մարդկութեան, կրթութեամբն առնէ զնոսա եթէ ոչ պարծանս՝ պիտանիս գոնեա անձանց և բոլորումն մարդկութեան։ Եւ չկրէ շատ մարդ գոլ, և զարժանաւոր մարդոյ զգիտութիւն և զիմաստութիւն պատուել, ոչինչ անձաշակ գոլով ամենևին յայնցանէ։ Եւ զի անմարթէ զգիտութիւն և զըղձալին քաղաքականութիւն առեալ թափել միանգամայն յազգի միում, ժամանակի պէտք են ապա, և մնալոյ ի հարց առ որդիս ժառանգեցուցանել զնոյն։ Վարձեալ մեզ օրինակ Աթոռս առաջի արձանացեալ կայ, որպէս բազմաքիրտն և բազմաձիկն երկայնմտութեամբ եհաս նա յոր եհան. ուր մեզ և՛ս դժուարին ի վերոյ կայ պաշտօն՝ ընտիր առնել յառաւելութիւնս նորա, և մի կուրօրէն խառն ի խուռն գերել զիւրս զհետ օրինակի նորա և գնացից, յորս դառնապաշաւ հեծէ նա, և հեծեցէ։ Վրկայնմտութեան պէտք են, և միաշունչ ջանից վարժչացն և վարժուցն և ազգին համաձայնութեան, և ամպրոպացն և խեռ հիւսիսացնոց հողմոց դադարելոյ՝ որ ի խաւիել են զերոյս գիտութեանց և գտունիս հաւատոց և իմաստութեան, ապա ծագեսցին յայնժամ և մեզ աւուրք ցանկալիք։

Եւ արդ իցիւ, ո ջանասէր և զգօն սանուանք, քանզի հասարակաց են իղձք ցանկացեալք և իրաւացիք, իցիւ, ասեմ, զի և ձերդ այս երախայրիք հանձարոյ մանկութեան ապատնեացն գուշակ գեղեցիկ, որ մտաց և ուշոյ են արգասիք և որ ձեռաց և մատանց ձարտարութիւնք, ոչ ի դահլճիս միայն ամիռո-

փեալ, և Թէպէտ պերճ պինամածուն ձեր ակումբ իմնատոյց բոլորեալ, և ոչ յօտարաց լոկ 'ի զարմանս հանդիսացեալ և 'ի գովեստ հայ հանճարոյ, քանայլ 'ի տեսիլ և առաջի ազգականաց ձերոց սիրելեաց, և որդեգրօրէն որդեսէր ծնողաց, որ սրտիւք և մտօք 'ի ձեզ ակնկառոյց 'ի սեմոյ հայրենեաց՝ 'ի լուր յանկարծ վաստակոյդ հրձռեալ մնան։ Այդքանի առաւելութիւն յայնժամ ձեզ 'ի խրախոյս, վաստակաւորացդ 'ի սփոփանս, ազգին 'ի յաձախել ակնկալութեան, 'ի յաջողութիւն ըղձից բարեսիրացդ. և օրհնութեամբ անուանն Աստուծոյ՝ 'ի կշտամբանս անուս և ախտաւոր մարդկանն։

Հ. Ա. ՃԱՐ.

Պարսից Շահին Աբբահաւու Մելգումեանց առած նոր պատուանունը։

ԿԱՋՄԱՒԷՊ օրագիրնիս մերթ ընդ մերթ առիթ ունեցեր է յուշախոսութիւն բովանդակ ազգին ծանուցանելու ան չնորհաբաշխութիւններն ու պատիւներն՝ որ մեր ազգին մէջէն ոմանք ունեցեր են իրենց սեպհական տէրութիւններէն. որոնք որչափ մեկ կողմանէ թագաւորաց ու անոնց պաշտօնէից երախտագիտութեանն ու առատաձեռնութեան ցոյց մը սեպուին, ուրիշ կողմանէ ալ առաւելապէս նոյն պատիւն ընդունողաց արդիւնքն ու արժանաւորութիւնը կը պայծառացընեն։ Այսանկներու տրուած պատիւները չէ թէ միայն իրենց յատուկ փառք մըն է, հապա նաև բոլոր ազգին ալ պարծանք. որով հետև որչափ ազգերնուս մէջ շատնան այսպիսի բարձրաստիճան անձինք տերութեանց պաշտօններու մէջ, այնչափ ալ ազգերնուս քաղաքականութեան ու աշխարհավարչական գործոց մէջ ունեցած յարմարութեանը ապացոյց կը սեպուին, որն որ ազգի մը զարգանալուն գլխաւոր առիթներէն մէկն է։ Այս պատճառով հետև ասպատիւներս հաւատարիմ ծառայութեանց ալ փոխարէն մի են, անոր համար կը յուսանք որ առջեւ լուրերնիս ալ աւելի քաջալերութիւն և ուրախութիւն մը ըլլայ անոնց՝ որոնք արդէն տերութեանց ծառայութեանց մէջ կը գտնուին։

Մենք այսօրինակ ուրախութիւն մը ունեցանք առ մօտերս՝ երբ լսեցինք, Թէպէտ և ուշ, պարսից Շահին սպահանցի Մելգումեանց Աբրահամ ազգային տուած խան պատուանունը, որն որ միայն պարսից մեծամեծ իշխանաց ու կուսակալաց կը տրուի. առ պատուոյ անունը, կ'ըսէ հրովարտակը, չէ թէ միայն Շահին կողմանէ Մելգումեանին ընտրայի մէջ պարսից դեսպանութեան առաջնին քարտուղար և թարգման ըլլալով ըրած ծառայութեանցը արքայական բարեհաճութիւն մը պիտի սեպուի, հապա նաև առ պատուով եղբէն ընելու ծառայութեանց քաջալերութիւն մը, որով ալ մեծագոյն չնորհաց ալ արժանաւոր ըլլայ Շահին մեծանձնութենէն։

Մեր ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ լսելով որ նոյն առթիւ նաև վարիչ Մուրատեան Ազգարանին վարչութեան աշակերտներէն Պարսկ Մելգումեան Յովսէփին ալ՝ որ վերոյիշեալ Մելգումեանին եղբօրորդին է, գծրայ գնդապետութեան պաշտօնն ու պատիւը տրուեր է։ Ենք տարակուսիր որ այս պատիւը յիշեալ Պարսկ Մելգումեանին Ազգարանիս ընթացիքը մէջ ցուցած բարեկրօնութեան և ուսումնասիրութեանը մրցանակը եղած ըլլայ։